https://doi.org/10.46991/hc.2023.20.2.187

Archbishop Mikael Sallantyan's letter to Nerses Ashtaraketsi [1]

Narek Hakobyan
https://orcid.org/0000-0002-7681-6757
PHD of History
Mesrop Mashtots Research Institute of Ancient Manuscripts
Researcher
narek.hakobyan@matenadaran.am

Keywords: Protestant movement, Armenian Catholics, nvirak, Matheos Choukhajyan Patriarche, Armenian Patriarchate of Costantinople.

The sources of the history of relations between the Armenian Apostolic Church and Armenian Protestant are diverse in their type and content. Among the primary sources, the memoirs of the first evangelical missionaries William Goodell (Forty years in the Turkish Empire), Eli Smith (Missionary Researches in Armenia) and others, Mission Herald magazine take an important place.

Along with the above-mentioned primary sources, the documents kept in the archive fund of Alexander Yeritsyan of the Mashtotsyan Matenadaran are of great importance from the scientific point of view. Among many documents, we have prepared a remarkable document for publication: the letter of Archbishop Michael Sallantian to Nerses Ashtaraketsi. In the letter, the author addresses a number of important issues, in particular: how the missionaries worked, how the evangelical communities expanded, what kind of education the apostolic and evangelical schools offered. The letter also addresses the nviraks (priestes to traveled from region to region and gathered donations for the Church) of the Armenian Apostolic Church and the activities of the Armenian Catholics.

Some spelling and punctuation corrections have been made in the letter to be published.

Միքայել արքեպիսկոպոս Սալլանթյանի նամակը Ներսես Աշտարակեցուն

Նարեկ Հակոբյան
Պատմական գիտությունների թեկնածու

[1] Տպագրվում է ՀՀ ԿԳՄՍՆ գիտկոմի 21T-6A114 թեմատիկ ֆինասավորման դրամաշնորհի շրջանակում:

History and Culture, Vol.-2(20), 2023, pp. 187-192
Received: 06.07.2023
Revised: 21.08.2023
Accepted: 15.12.2023

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.
© The Author(s) 2023

Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ Մատենադարան,
գիտաշխատող

Հիմնաբառեր՝ Բողոքական շարժում, հայ կաթոլիկներ, նվիրակ, Մատթեոս Չուխաջյան պատրիարք, Պոլսո պատրիարքարան։

Հայ առաքելական եկեղեցու և հայ բողոքական հարանվանությունների հարաբերությունների պատմության աղբյուրները բազմազան են իրենց տեսակով և բովանդակությամբ։ Սկզբնաղբյուրների շարքում կարևոր տեղ են գրավում ավետարանական առաջին միսիոներների՝ Վիլյամ Գուդելի (Forty years in the Turkish empire), Էլի Սմիթի (Missionary researches in Armenia) և այլոց հուշագրությունները, Mission Herald ամսագիրը։ Ի շարս վերոնշյալ սկզբնաղբյուրների, գիտական ուսումնասիրության տեսանկյունից կարևոր նշանակություն ունեն Մաշտոցյան Մատենադարանի Ալեքսանդր Երիցյանի արխիվային ֆոնդում պահվող վավերագրերը։ Բազմաթիվ վավերագրերից հրատարակության ենք պատրաստել ուշագրավ մի վավերագիր՝ Միքայել արքեպիսկոպոս Սալլանթյանի նամակը Ներսես Աշտարակեցուն։ Նամակում հեղինակը անդրադառնում է մի շարք կարևոր հիմնախնդիրների, մասնավորապես՝ ինչպես էին գործում միսիոներները, ինչպես էին ընդարձակվում ավետարանական համայնքները, ինչպիսի կրթություն էին առաջարկում առաքելական և ավետարանական դպրոցները։ Նամակում անդրադարձ է կատարվում նաև Հայ առաքելական եկեղեցու նվիրակներին և հայ կաթոլիկների գործունեությանը։

Հրատարակվող նամակում կատարել ենք որոշ ուղղագրական և կետադրական շտկումներ։

Письмо архиепископа Микаэла Саллантяна Нерсесу Аштаракеци

Нарек Акопян
Кандидат исторических наук
Научно-исследовательский институт древних рукописей имени Месропа Маштоца
Исследователь

Ключевые слова: Протестантизм, Армянские католики, посол (нвирак), Константинопольский патриархат Армянской апостольской церкви, Маттеос Чухаджян, Патриарх.

Источники истории взаимоотношений Армянской Апостольской церкви и армянских протестантов разнообразны по своему типу и содержанию. Среди первоисточников важное место

занимают мемуары первых миссионеров-евангелистов Уильяма Гуделла (Forty years in the Turkish Empire), Эли Смита (Missionary Researches in Armenia), журнал Mission Herald.

Наряду с вышеперечисленными первоисточниками большое значение с научной точки зрения имеют документы, хранящиеся в Матенадаране, архивном фонде Александра Ерицяна. Среди множества документов мы подготовили к публикации письмо архиепископа Михаила Саллантяна Нерсесу Аштаракеци. В письме автор затрагивает ряд важных вопросов, в частности: как работали миссионеры, как расширялись евангелические общины, какое образование предлагали апостольские и евангелические школы. В письме также говорится о послах (священники, собирающие пожертвования для церкви) Армянской Апостольской церкви и деятельности армян-католиков.

В опубликованном письме были выполнены орфографические и пунктуационные поправки.

* * *

Կայսերապսակ գերաստիճանեալ Վեհափառ Հայրապետ

Գրե առաքեալն Պետրոս <<ոչ եթէ ըստ կամաց մարդկան տուաւ մարգարէութիւն երբեք, այլ ի Հոգւոյն Սրբոյ կրեալք՝ խօսեցան մարդիկ յԱստուծոյ>>։ Երևի թե դոյն այդ շնորհք տուեալ էր և ինձ մեղաւորիս, երբ քանի մի ամօք յառաջ գրելով զնամակ առ պատանի ոմն աշակերտ, դպրոցին փաստորաց ի Շուշի, յորդորեցի զնա ուսանիլ զգիտությունս, զլեզուս և զքաղաքավարութիւնս։ Բայց և ի Հոգւոյն Սրբոյ գրեալ մարգարէաբար առանց դիտման, առանց մտադրութեան ըստ պատահման յաւելեալ էմի և զերկուս զայս բառս ՛՛զուղիղ հաւատս՛՛։ Զայսպիսի անորոշ բանս իմ ի չար կողմն մեկնելով բծախնդիր ոմն զնամակն իմ զայն առաքեալ էր յէջմիածին, և Ձեր վեհափառութիւնդ ետ բերել զայն ընդ այլոց նամակաց իմոց և ընթերցաւ առաջի ժողովրդոց ազնուական ոգւով։ Բայց գոհութիւն Աստուծոյ, որ ճշմարտեաց զմարգարէութիւն իմ բազում օրինակօք գործոց վարդապետաց և աշխարհականաց մերոց, իբր զի նախ Կաթողիկոսն Էջմիածնի զմիաբանն վանաց իւրոց զԽաչատուր Աբովեանն առաքեաց ի Դէրբդէ համալսարանն, ուր ամենայն ուսուցիչք են լուտերականք։ Ապա, աշակերտն դպրոցին Թֆլիզու Ստեփան Նազարեանն զնաց անդ, որ ուսաւ զգիտութիւնս և զհաւատս, ամուսնացաւ ընդ լուտերական աղջիկն և դարձաւ առ մեզ առ ի լուսաւորել զազգն մեր։ Ուստի ի դպրոցէն Լազարեանց վեց մանկունք գնացին ի նոյն համալսարանն և քանիք ևս գնալոց են անդ։ Հանգուցեալ Հայրապետն և սինոտականք նորա ի նամակէ աշխարհականի միոյ ուսան զնոր հաւատս և հաւատափոխ եղեալ գրեցին առ մինիստրն թէ միք ընդունիք զեօթն ընդհանրական ժողովս։ Կիրակոս կաթողիկոսն Սսոյ, Պօղոս պատրիարքն Պոլսոյ, և այլ ևս բազմութիւնք ամենատգէտ վարդապետաց և աշխարհականաց ի ժողով գումարեալ ի Պոլիս յամին 1820։ Ուսան ի խաբեբայ Մխիթարեան աբեղայից (որք ստութեամբ կայացեալ մտեալ էին ի պատրիարգարանն) զմոլորութիւնս նոցա և հաւատափոխ եղեալք ի յաւիտենական նախատինս իւրեանց։ Ի տետրակն հրաւեր սիրոյ տպեցին զերկուս զայն ամենասուտ բանս, թէ Պետրոս էր գլուխ առաքելոց, և թէ յաջորդք առաքելոց ունին զնոյն իշխանութիւնս, զոր ունէին առաքեալք, յորմէ ըստ ինքեան հետևի, թեև պապն Հռովմայ, որ կեղծէ զինքն յաջորդ Պետրոսի այժմ է գլուխ ամենայն եպիսկոպոսաց համօրէն քրիստոնեից, ուրեմն և հայոց եպիսկոպոսաց, բայց որպէս թէ չէին բաւական այս ամենայն ամօթալի հավատափոխութիւնք կաթողիկոսաց, պատրիարգաց, վարդապետաց և աշխարհականաց մերոյ։

Այժմ ի նորումս տարածեցաւ նոր լուր դառնութեան, յորմէ և շարժեցաք գրել և ծանուցանել Ձերումդ վեհափառութեան, զի գուցէ դեղ և դարման ինչ արասջիք դասն վերացդ։ Իբրև զի ի Զմիւռնիա գոն մշակք քարոզիչք Անգղիական եկեղեցւոյն Կալվինականաց, որք եւ տպագրեն հայերէն գրեանս, սոքա յամ ամի տան հաշիւ մեծաւորի իւրեանց ի Լոնդոն քաղաքի, և ի հաշուի նախընթաց ամի որ տպեալ տարածեալ է ի կազէթս նախ անգղիէրեն և ապա գերմանէրեն։ Գրեն երկու ցաւալի լուրս, մի թէ նոքա աւելի քան 40000 հայս արդէն որսացել են յաղանդ իւրեանց ի Զմիւռնիա, ի Պոլիս, ի Տրապիզոն, ի Վան, ի Կալկաթայ և յայլ քաղաքս, և երկրորդ թե Մատթեոս Եպիսկոպոսն ցորչափ առաջնորդ էր ի Զմիւռնիա գործակից և օգնական էր մեզ ի դարձուցանել զհայս։ Իսկ յորժամ պատրիարք եղև ի Պոլիս առ երեսս միայն փոքր մի ներհակեցաւ մեզ և լուռ եղև առանց վնասելոյ մեզ և այլն։ Եթէ ճշմարիտ են երկու այդ բանք, ապաքէն զարհուրելի իմն են և Ձերումդ վեհափառութեան անկանի դեղ եւ դարման առնել վիրացդ, զի մի առաւել ևս ճարակեսցի աղանդ այդ ի մէջ ազգիս, ապաքէն Մխիթարեանք տպեալ են տետրակ մի, իբր եղծումն աղանդոյն Լութերի և Կալվինի, բայց նոքա զմոլորութիւն իւրեանց քարոզին յայնմ տետրակի, թէ Պետրոս էր գլուխ այլոց առաքելոց, թէ պապն է յաջորդ Պետրոսի և նոյնպէս գլուխ է ամենայն քրիստոնեից եւ ամենայն եպիսկոպոսաց, թէ որ ոչ հնազանդի պապին ո՛չ կարէ փրկիլ, և այլ ևս առասպելք որովք ջանան նորա զմերայինսն շրջել յաղանդ իւրեանց եւ այլն։ Իսկ առ այն թէ Մատթէոս էր գործակից առ ի շրջել ի զհայս ի Զմիւռնիա, ոչ գիտեմ զինչ ասացից, գուցէ մշակքն այնոքիկ կաշառով կուրացուցեալ էին զնա, զի եկեալքն ի Պոլսոյ պատմեցին մեզ թէ արդարև արծաթասէր ոմն է Մատթէոսն, որ կաշառով ձեռնադրէր զքահանայս և թիւրէլը զդատաստան ժողովրդեան վասն կաշառի, որոյ վասն և ամիրայք Պոլսոյ արտաքսեցին զնա ի պաշտօնէն և ետին պատրիարգ զՅակովբոսն, հաստատի կարծիքդ այդ ի բանից անտի նորա, զոր գրէ վասն մեր առ Ձերդ Վեհափառութիւն ի նամակի իւրում <<9 յուլիսի 1845 ամի այսպէս թէ Սալանթեանն խռովայոյզ բանս ունի, որպէս ի գրուածոց նորա քաջ նշմարեն ընթերցողք, միք կամիմք սէր և միաբանութիւն առնել ընդ լատինայս, իսկ նա գրովք խռովումի արկանէ ի մէջ մեր, վասն այնորիկ ոչ կամեցաք զգալն նորա աստ ի Պոլիս և այլն>>։ Ափսոս նախանձոտ հոգւոյն պատրիարգն հայոց խռովարար կոչէ զմեզ։ Վասն էր, վասն ջատագովելոց մեր զուղղափառ հաւատս եկեղեցւոյ մեր, վասն հրատարակելոյ զմոլորութիւնս պապականաց, և զսխալանս քերականութեան նոցա ի կրօնագիտութեան մերում, ի քերականութեան, ի ճարտասանութեան, ի մուզայքն, ի պատասխանիքն, ի պատմութեամբ եկեղեցական մերոյ, ի խտրոցն հաւատոյ, ի դեղարանն գիտութեանց, ի թամիրասն և յայլս։ Ահա վարձն՝ զոր ընկալաք փոխանակ դառն աշխատանաց մերոց ի շարադրութիւն գրոցդ կորուսանելով զառողջութիւն անձին և զտեսութեան աչացն եւ այլն։ Բայց գոհութիւն Աստուծոյ, որ ըմբռնէ զխորագէտս ի խորագիտութեան նոցա, զի ոչ միայն զմեզ բամբասէ աքսորեալն այն, այլև զամենայն միաբանս Էջմիածնի իբր զի Ձերդ վեհափառութեանն հարցեալ է զնա, թէ ընդէր ոչ ընդունին Պոլսէցիք զնուիրակս մեր, իսկ նա այսպէս պատասխանէ ի վերոյիշեալ նամակի իւրում թէ <<որովհետև յառաջին ժամանակս նուիրակք պաշտօնի իւրեանց անվայել գործս գործէին, ձեռնամուխ լինէին ի քաղաքական գործառնութիւնս, բռնակալութեամբ նեղէին զժողովուրդս յոյժ յոյժ, և զանազան խռովութեանց պատճառ լինէին յայլ և այլ քաղաքս, վասն այն ժողովուրդքն ձանձրացեալ յոյժ ի տաղտկալի գործոց նոցա, ազգային ժողով արարեալ բարձին զնուիրակութիւնն եւ սահմանեցին առ յապայն ոչ ընդունել զնուիրակս Էջմիածնի եւ

այլն>>։ Ափսոս լուսակերտ Աթոռոյն Էջմիածնի, զորպիսի համարումն ունին զմէնջ նոյն իսկ ժողովուրդքն մեր, արդարև տաղտկալի են գործքդ նուիրակաց, և յայտնի է թէ վասն այդր պատճառի ոչ կամեցան պօլսեցիք զգնալն մեր անդ, ասելով թէ սա ևս միաբան է Էջմիածնի, և երկիցս նուիրակ կարգեցաւ ի Ռուսաստան։ Գուցէ աստ եւս նուիրակ կարգեսցի և այլն։ Թէպէտ մեք ի նուրիակութեան մերում ոչ բռնակալութիւն արարաք ումեք եւ ոչ խռովութիւն յարուցաք ուրեք, այլ մանաւանդ կրեցաք բռնութիւնս և զրկանս ի սուտ եղբարց որոյ վասն և արդար դատաստանն Աստուծոյ խափանեաց զնուիրակութիւնս զրկողացն զմեզ։ Իսկ թէ արդարև ոմանք ի նուիրակացն Էջմիածնի խռովութիւնս յարուցին ի Պոլիս ականատես վկայեմք մեք իսկ, յորոց առաւել զարհուրելին էր խռովութիւն Դաւթի և Դանիէլի, յորում ժամանակի և զմեզ հալածեցին դանիէլիեանք, զի խորհրդական և գրագիր էաք Յովհաննէս պատրիարգինն Պոլսոյ որ էր Դաւթեան։ Եվ յորժամ աքսորեցին զնա դանիէլեանք, ջանացին և զմէզ աքսորել, վասն որոյ ձանձրացեալ ի տաղտկալի գործոց նոցա անցաք առ լատինահայս, որ եղև Աստուածային կարգադրութեամբ, նախ զի ուսեալ ի նոցանէ զկարևոր գիտութիւնս դարձաք ի հայրենի եկեղեցի մեր, և լուսաւորեցաք զայն թէ տպագրութեամբ բազում մատեանից և թէ ուսուցմամբ աւելի քան 400 աշակերտաց ի յաւիտենից չէր լռեալ թէ միաբան ոք Էջմիածնի յօրինեալ իցէ զայնչափ գերազանց մատեանս, չորս միք ի լոյս ածաք, և ահա փոխանակ շնորհակալութեան և վարձուց, ընկալաք զհալածանս ի նախանձուտ եղբարց։ Սակայն ուրախ եմք հոգով զի խիղճ և գործք մեր վկայ են մեզ, թէ ոչ միայն վնաս ինչ ոչ արարաք ազգի և եկեղեցւոյ մերում, այլ օգուտ բազումս արարաք, զորս թե մարդիկ , քարինք աղաղակեսցին։ Իսկ հալածող եղբարքն մեր ոչ միայն օգուտ ինչ ոչ արարին, այլ և բազմադիմի օրինակաւ վնասեցին եկեղեցւոց և ազգին մերում, որում վկայ են այնչափ հազարաւոր Հայք ուրացեալք զէջմիածինն և յարեալք ի Պապն Հռովմայ։ Որք և տպագրեալ գրով հերետիկոս և հերձուածող կոչին զմեզ, որպէս ցուցեալ եմք ի յառաջաբանութեան կրօնագիտութեան մերում, և ի նորումս վերոյիշեալ հազարաւոր հայք դարձեալք ի լուտերականս, ևս և նոքա, որք դարձան առ վիրս, առ քուրդս, առ թուրքմանս, յորոց սակի են եւս են։ Հայ Հռոմք, որք կան մինչև ցայսօր, իսկ աստ ի Ռուսաստան հարիւրաւորք ի հայոց արք և կանայք ամուսնանան ընդ ուռուս, ընդ գերմանացիս, ընդ լէհս, որովք զաւակ նոցա գնան յայլ կրօնս, և այս ամենայն հաւատափոխութիւնք եկեղեցականաց և աշխարհականաց մերոց զայն ինչ ցուցանէ, թէ ինքեանք ոչ ճանաչեն զուղիղ հաւատս, այլ յայլոց ազգաց ուսանին զայն, և այդ իսկ լեալ է ի սկզբանէ մինչև ցայսօր, ի Լուսաւորչէն մինչև ցՇնորհալին, նախնիքն մեր ուսան զհաւատս յունաց, թարգմանեցին զգիրս Աթանասի, Կիւրղի, Բարսղի, Ոսկեբերանի և այլոց։ Ի Շնորհալւոյն մինչև ցՄխիթար Սեբաստացին մինչև ցայսօր ազգն հայոց գերի և աշակերտ լեալ են Մխիթարեանց, սոքա միայն տպագրեն զգրեանս, վաճառին ազգի մերում և հպարտանան դրամովք մերովք այնչափ, զի այժ միինգ միլիոն ռուբլի ունեն ի բանկն Անգղիացւոց ի Լոնդոն որպէս յայտնի է մեզ։ Սոքա Մխիթարեանք իմաստութեամբ յուրեանց խաբեցին զամենագետ կաթողիկոս, պատրիարգս, վարդապետս Հայոց ի վերոյյիշեալ չարաժողովն Պոլսոյ 1820 և զազգն մէր արարին գերի պապին Հռօմայ։ Սոքա Մխիթարեանք կարացին շահել զսիրտն մերադաւան աղայ Սամուէլին Մուրատեան ի Կալկաթայ և ընկալան ի նմանէ զերիս միլիօն դրամս առ ի կանգնել զդպրոց և ուսուցանել Հայոց զաղանդ իւրեանց գործ որ դառնայ յանհնարին նախատինս վարդապետաց մերոց, բազմաթիւ կաթողիկոսք, պատրիարգք և Առաջնորդք Հայոց յետադաս եղեալ են քան զՄխիթարեանցն աբեղայս, սոքա վասն գիտնականութեան և տպագրութեան մատեանից ամենայն ուրեք

փառաւորին և հարստանան։ Իսկ մերքն նախ ատելոց զգիտութիւնս և հալածելոց զգիտնական եղբարս անարգին և անպատուին ի նոյն իսկ ժողովրդոց իւրեանց այնչափ զի այժմ առ մեզ աշխարհականք նստեալ են դատաւոր վարուց վարդապետաց իւրեանց։ Աշխարհականք յօրինեն տաղ, շարականք յերգիծանել զվարդապետն, աշխարհական պրօկուրօրք Էջմիածնի գրեն առ մինիստրն վասն վարուց վարդապետաց, աշխարհական հայք և ռուսք կազմեն կօմիտետ առ ի դատել զԱռաջնորդս։ Աշխարհականք ստգտանին զվարս նուիրակաց, խափանին զնուրականութիւնս, զպատարագս փոփոխին յամենայն ամի իբրև զքարինս տամայի։ Պապական մխիթարեանց տան դրամս առ ի լուսաւորել զազգն արհամարելով զկաթողիկոս իւրեաց զհաւատս վարդապետաց իւրեաց մոլորական կարծելով ուրանան զայն և յարին ի պապականս, ի լուտերականս, ի մահմեդականս և ի յունադաւանս այլովք բազմօք հանդերձ որք յայտնի են ամենեցուն և չէ կարելի ուրանալ, իսկ պատճառ այդ ամենայն սոսկալի հաւատափոխութեանց կաթողիկոսաց, պատրիարգաց և աշխարհականաց մերոց ոչ այլ ինչ է, վեհափառ Տէր, եթէ ոչ պակասութիւնն աստուածաբանական գրոց, որ լինէր կանոն հաւատոյ, յորմէ թէ եկեղեցականք և թէ աշխարհականք մեր ուսանեին, թէ յինչ հաւատայ եկեղեցին հայոց և յինչ ոչ հաւատայ։ Ողորմելի եկեղեցին մեր ի Լուսաւորչէն մինչև ցայսօր, ընթացս 1500 ամաց դեռ ոչ ունի աստուածաբանութիւն մի։ Եկին և գնացին ի մեզ հազարաւոր կաթողիկոսք, պատրիարգք ու Առաջնորդք և կաւալերք և ո՛չ ոք ի նոցանէ կարողացաւ գրել զայն։ Մեք միայն յօրինեալ էաք զընդարձակ աստուածաբանութիւն ըստ դաւանութեան մերս եկեղեցւոց, այլ իբրև տեսաք թէ փոխանակ շնորհակալութեան, վարձրատրութեան և փառաց ընկալաք զրկանս և հալածանս ի բծախնդիր չարանախանձ եղբարց, արկաք զայն ի հուր ընդ խտրոցին հաւատոյ, զայն ասելով, եթէ ո՛չ տէր շինէ զտունն ի նանիր վաստակին շինօղք նորա, ևս և թէ աղաչեսցուք զտէր հնձոյն, զի հանցէ մշակս ի հունձս իւրս առ հալածիչս մեր թէպէտ ունէաք զայն ասել թէ բժիշկ բժշկեա զանձն քո, հա՛ն նախ զգերանդ յականէ քումմէ, սակայն ոչ արարաք զայդ այլ Աստուծոյ յանձնեցաք, որ եւ եցոյց զարդարութիւն իւր այժմէն և ցուցցէ եւս առ յապայն։

Յանձն առնելով զիս երկնասլաց աղօթքից և օրհնութեանց
Ձերումդ Կայսերապսակ Վեհափառ տերութեամբ
Մնամ միշտ պատրաստական ծառայ
Միքայէլ Արքեպիսկոպոս Սալլանթեան
Ի Մոսկուայ
Ի 15 հոկտեմբերի 1849 ամի։

Գրականություն

Մատենադարան, Ալեքսանդր Երիցյան արխիվային ֆոնդ, թղթապանակ 147, վավերագիր 42